

3764



[Handwritten signature]

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար

Համբարձում Մաթևոսյան

«30» 04 2026թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 056 - 26

Նախաձեռնող՝

«ԱՐՊԱՆԻՎ» ՍՊԸ

Երևան, Կենտրոն, Նար-Դոսի փողոց 122

Գործունեությունը՝

Լոգիստիկ պահեստային կենտրոնի կառուցում

Երևան, Էրեբունի վարչական շրջանի Արին-Բերդի փողոց 3-րդ նրբանցք 17/2 հողամաս

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 056 - 26

«30» ապրիլի 2026 թ.

Երևանի Էրեբունի վարչական շրջանի Արին-Բերդի փողոց 3-րդ նրբանցք 17/2 հողամաս հասցեում նախատեսվող լոգիստիկ պահեստային կենտրոնի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ԱՐՊԱՆԻՎ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթղթեր
Գործունեության տեսակը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Երևան, Էրեբունի վարչական շրջան

Ներածական մաս. «ԱՐՊԱՆԻՎ» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված նախատեսվող գործունեության նպատակն է Էրեբունի վարչական շրջանի Արին-Բերդի փողոց 3-րդ նրբանցք 17/2 հողամաս հասցեում կառուցել լոգիստիկ պահեստային կենտրոն:

Նախատեսվող լոգիստիկ պահեստային կենտրոնի աշխատանքային նախագիծն իրականացվել է 2025 թվականի հուլիսի 31-ին Երևանի քաղաքապետի կողմից տրված ՆՆԹ-6506-25 ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա՝ 2.79111 հա (ըստ վկայական N 04072025-01-0324) մակերես ունեցող հողամասում:

Նախատեսվող գործունեությունը, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8)-րդ կետի ա. ենթակետի, դասակարգվում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկին:

Կառուցապատվող հողամասի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության է, գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական օբյեկտների, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նկարագրական մաս. Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքն իրենից ներկայացնում է Արարատյան գոգավորության հյուսիս-արևմտյան վերջավորության մի հատված: Հետազոտվող տեղամասում ռելիեֆը հարթ է, բացարձակ նիշերը տատանվում են 992.5-998.5 մետրերի սահմաններում:

Հիդրոերկրաբանական տեսակետից ուսումնասիրվող տեղամասում գրունտային ջրերն ունեն ընդհանուր տարածում, որոնք սնուցվում են մթնոլորտային տեղումների, ձնհալի հաշվին: Դրանց հորիզոնը փորված հորատանցքերով հատվել է 7.8 մետր խորությունում, որը կայունացել է 13.7 մետր խորության վրա:

Ցիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ, ինչպիսիք են՝ կարսոց, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ նախագծվող կառույցի վրա՝ բացակայում են:



Համաձայն հաշվետվության մեջ ներկայացված տեղեկատվության՝ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակներ և կենդանատեսակներ գործունեության ենթակա տարածքում չեն հայտնաբերվել: Նախատեսվող գործունեության տարածքը չի առնչվում բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների հետ:

Նախատեսվում է կառուցել լոգիստիկ պահեստային կենտրոն, որն իրենից կներկայացնի 4 մասնաշենքերից բաղկացած համալիր: Առաջին շինությունը նախատեսվում է մեկ հարկանի, առանց նկուղային հարկի, մասնակի միջնահարկով՝ որպես տարածքի վարչական մաս, երկրորդ և երրորդ շինությունները նախատեսվում են մեկ հարկանի՝ առանց նկուղային հարկի, չորրորդ շինությունը՝ երկհարկանի նկուղային հարկով, որի առաջին հարկը նախատեսված է որպես ավտոկայանատեղի, իսկ երկրորդ հարկը որպես ամբողջ համալիրի ադմինիստրատիվ մաս:

Նախատեսվող գործունեության տարածքում առկա է ապամոնտաժման ենթակա 8.3 քմ մակերեսով կրպակ:

Նախատեսվող լոգիստիկ պահեստի ջրամատակարարումը և ջրահեռացումն իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի՝ միանալով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ ցանցին: Ջրամատակարարումը նախատեսվում է տարածքից մոտ 770 մ հեռավորության D=200 մ տրամագծով ջրագծից, իսկ տարածքում քանի որ ջրահեռացման համակարգը բացակայում է, նախատեսվում է կառուցել հերմետիկ հոր: Սեպտիկ դիտահորը տեղակայված է տարածքի հնարավոր ստորին հատվածում, հոսքաջրերի հեռացումը նախատեսվում է իրականացնել մեքենայով տեղափոխում դեպի քաղաքային կոլեկտոր:

Շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում էլեկտրամատակարարումը 525 կՎԱ հզորությամբ կիրականացվի 1*630/10 կՎԱ տրանսֆորմատորով՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ համակարգից:

Գազամատակարարում չի նախատեսվում:

Հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի տեղաշարժման համար նախատեսվել են թեքահարթակներ:

Լոգիստիկ պահեստային կենտրոնի տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- հողամասի ընդհանուր մակերես՝ 27911.1 քմ (100 %),
- շինություն 1-ի մակերես՝ 9960.00 քմ (35.68 %),
- շինություն 2-ի մակերես՝ 1958.88 քմ (7.02 %),
- շինություն 3-ի մակերես՝ 3134.84 քմ (11.23 %),
- շինություն 4-ի մակերես՝ 417.48 քմ (1.50 %),
- ծածկարան՝ 104.0 քմ (0.37 %),
- էլ. ենթակայան՝ 65.4 քմ (0.23 %),
- պահակատուն՝ 18.0 քմ (0.06 %),
- պարիսպ՝ 127.03 քմ (0.45 %),
- կանաչապատման մակերես՝ 289.13 (1.04%),
- ասֆալտապատ մակերես, սավաճքներ՝ 11836.34 քմ (42.42 %):

Նախագծով նախատեսվում է նաև հիմքերի փորման աշխատանքների իրականացում: Կատարվելու է մոտ 3024 խմ ընդհանուր ծավալով փորման աշխատանքներ: Քանի որ շինությունները տեղակայված են լինելու իրենց հարակից տարածքներից 1.2 մ բարձր՝ հողի համահարթեցման նիշից, ապա հիմքերի համար հողի ծավալը նախատեսվում է կուտակել տեղում և օգտագործել որպես լիցք:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել տարածքի կանաչապատում՝ տարածաշրջանին և տեղի բնակլիմայական պայմաններին բնորոշ



Տառափային բուսականությամբ՝ գնդաձև ակացիա՝ 2 հատ, ուռենի բաբելոնական՝ 1 հատ, թույա՝ 1 հատ, գնդաձև թույա՝ 1 հատ, յասաման՝ 2 հատ, վարդեր գետնատարած՝ 5 հատ, բոցենի՝ 15 հատ, վաղենակ՝ 10 հատ, սոխածաղիկ՝ 150 հատ: Կանաչապատման համար անհրաժեշտ կլինի մոտ 30 խմ բուսահող, որի ձեռք բերման վայրը կհամաձայնեցվի Երևանի քաղաքապետարանի հետ: Կանաչապատ տարածքների համար նախատեսվում է կաթիլային ոռոգման համակարգ:

Նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված կլինեն փորման, բեռնման, բետոնային աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման հետ և այլն:

Մթնոլորտային արտանետումները կանխելու կամ նվազեցնելու նպատակով նախատեսվում է՝ շինարարական աշխատանքների ընթացքում օդի դրական ջերմաստիճանի դեպքում՝ օրվա ընթացքում պարբերաբար ջրցանի իրականացում, շինարարական հրապարակի ցանկապատում, շենքերի և շինությունների շինարարությանը համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով ծածկում, շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների վիճակի պարբերաբար ստուգում և կարգավորում, շինարարական նյութերի տեղափոխում փակ ծածկով (փոշու համար անթափանց ծածկոցներով) մեքենաներով, շինտեխնիկայի անվադողերի լվացում՝ շինհրապարակից դուրս գալուց առաջ, սորուն նյութերի, հողային զանգվածների պահեստների ծածկում՝ համապատասխան բարձրությամբ թաղանթով, հղկման աշխատանքների իրականացման ընթացքում փոշու արտանետումները բացառող սարքերի և տեխնոլոգիաների կիրառում, և այլն:

Աշխատանքային գոտում փոշու արտանետումները կանխելու և նվազագույնի հասցնելու համար՝ պետք է կիրառվեն փոշեճնշիչ մեթոդներ և փոշենստեցման միջոցառումներ՝ ելնելով բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների նորմատիվներից, փոշեառաջացումը ճնշելու նպատակով կտեղադրվեն 8 հատ ջրային մառախուղի սարքավորումներ, արտանետումների արդյունավետ կառավարման համար կկիրառվեն տեղային փոշեկլանմամբ հղկող սարքավորումներ և այլն:

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվում է ջրցանի ծավալների հաշվարկում, որը չի առաջացնի մակերևութային հոսքեր և կբավականացնի միայն փոշենստեցման համար և այլն:

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են շինարարական գործընթացներում ներգրավված տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով այդ տարածքներում սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակի ապահովում, ինչպես նաև ժամանակակից տեխնիկական միջոցների ներգրավում, աշխատանքների ավարտից հետո բոլոր տարածքների մաքրում և առաջացած թափոնների տեղափոխում ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր և այլն:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում կառաջանա շինարարական աղբ, որն ամբողջությամբ կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված վայր, իսկ առաջացած կենցաղային աղբը կտեղափոխվի աղբահավաք ծառայության կողմից:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար անհրաժեշտ է՝ աղմուկի առաջացման ժամանակակից ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցների ներգրավում, աղմկահարույց աշխատանքների իրականացում օրվա ցերեկային ժամերին, ինչպես նաև դրանց



շահագործում տեխնիկական նորմալ վիճակում, մեքենաների ապահովում համապատասխան խլացուցիչներով և այլն:

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու և օդերևութաբանական վատ պայմանների ազդեցությունը մեղմելու նպատակով նախատեսված են կանխարգելիչ, հակահրդեհային, ինչպես նաև լրացուցիչ այլ միջոցառումներ:

Լոգիստիկ պահեստի շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- մթնոլորտային օդ արտանետումների (փոշի, CO, NOx) որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,
- օդի դրական ջերմաստիճանի դեպքում շինարարական հրապարակը օրվա ընթացքում պարբերաբար ջրել՝ բացառելով կեղտաջրերի թափանցումը շինարարական հրապարակի սահմաններից դուրս,
- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,
- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ անգամ հաճախականությամբ,
- կանաչապատման աշխատանքներն իրականացնել՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N108-Ն որոշման և Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի մարտի 22-ի N14-Ն հրամանի դրույթներին համապատասխան,
- կանաչապատման աշխատանքներ իրականացնող կազմակերպությունը պետք է հետևողական լինի տնկված ծառերի աճին և խնամքին,
- հարակից տարածքներում կենսաբազմազանության մոնիթորինգ՝ 3 ամիս մեկ անգամ հաճախականությամբ:

Պատճառաբանական մաս. Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, Երևանի քաղաքապետարանից, Էրեբունի վարչական շրջանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողություններն ու առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակման մեջ:

Հաշվետվության գնահատման և փորձաքննության գործընթացներում, օրենսդրությամբ սահմանված կարգով, Երևանի Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի նստավայրում իրականացվել են հանրային լսումներ, որի ընթացքում քննարկվել են կանաչապատման, նախատեսվող կոմունիկացիաներին առնչվող հարցերը: Ամփոփելով հանրային լսումը՝ մասնակիցների կողմից նախատեսվող գործունեությունն արժանացել է հավանության:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք առնչվում են շինարարական աշխատանքների հետ, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմերի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել



ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

1. Շինարարության ընթացքում ապահովել բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում նախատեսված միջոցառումների իրականացումը սահմանված ժամանակահատվածում:
2. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում առաջացող շինադրի և շինարարական թափոնների հեռացումն ու տեղափոխումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված վայր:
3. Բետոնի տեղափոխումն իրականացնել ՇՄԱԳ հաշվետվությունում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
4. Կանաչապատումն իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմաններին բնորոշ ծառաթփային բուսականությամբ՝ Կառավարության 2018 թվականի փետրվարի 8-ի N108-Ն որոշման պահանջներին համապատասխան՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:
5. Առաջնորդվել Կառավարության 2025 թվականի մայիսի 22-ի N611-Լ որոշմամբ հաստատված «Մթնոլորտային օդի պահպանության բնագավառում 2025-2030 թվականների համալիր միջոցառումների» ծրագրով, ինչպես նաև քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2026 թվականի հունվարի 15-ի N 02-Ն հրամանով սահմանված պահանջներով (մասնավորապես կարևորելով փոշենստեցման՝ այդ թվում՝ փոշեճնշիչ սարքավորումների կիրառումը):
6. Աշխատանքների իրականացման ընթացքում առաջնորդվել ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N438 որոշման 43-րդ կետի պահանջով՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ հայտնել լիազորված մարմնին:

ԵԶՐԱՓՈՒԿ ԿԻՉ ՄԱՍ

«ԱՐՊԱՆԻՎ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Երևանի Էրեբունի վարչական շրջանի Արին-Բերդի փողոց 3-րդ նրբանցք 17/2 հողամաս հասցեում նախատեսվող լոգիստիկ պահեստային կենտրոնի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջին կարգի մասնագետ՝



Երիքնագ Մկրտչյան

Սվետլանա Կիզիրյան